ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 16
17.08.2004թ. կնքված N ԾՁԲ- 04/36 գնման պայմանագրի

ք. Երևան <<24>> մարտի 2022թ.

Ջրային կոմիտեն, ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղարի պարտականությունները ժամանակավոր կատարող Ա. Մարգարյան, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից և <<Արփա - Սևան>> ԲԲԸ-ն, ի դեմս ընկերության գլխավոր տնօրեն Պ. Հակոբյանի. որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2022 թվականի մարտի 3-ի N 242-Ն որոշումը, ինչպես նաև՝ 17.08.2004թ. կնքված N ԾՁԲ – 04/36 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 10.7 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

## 1. Համաձայնագրի առարկան

Սահմանել՝

1.1 Պայմանագրի 1.5 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<1.5 Պայմանագրի գործողության ժամկետն ավարտվելուց հետո, կողմերի փոխադարձ համաձայնությամբ, այն կարող է երկարաձգվել ոչ ավելի քան 2022 թվականի դեկտեմբերի 31-ը>>:

1.2 Կողմերի փոխադարձ համաձայնությամբ Պայմանագրի գործունեության ժամկետը համարվում է երկրաձգված մինչև 2022թ. դեկտեմբերի 31-ը:

1.3 Սույն համաձայնագրի վճարման ժամանակացույցը՝ համաձայն հավելված N 1-ի:

1.4 Համաձայնագիրը կնքվում է նախատեսված ֆինանսական միջոցների չափով:

1.5 Պայմանագրի ամբողջական կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների առկայության դեպքում Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումը կիրականացվի այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը կլուծվի, եթե համաձայնագրի կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում:

## 2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը: Համաձայնագրի պայմանները կիրառվում են պայմանագիրը կնքելուց հետո մինչև դրա հիման վրա համաձայնագիր կնքելը կողմերի միջև 2022թ. հունվարի 1-ից փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ, ինչպես նաև գործում է մինչև կողմերի կողմից սույն համաձայնագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ կողմերի պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում են հայերեն լեզվով՝ երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
Ջրային կոմիտե
ք. Երևան, Վարդանանց 13ա
ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011011708
ՀՎՀՀ 02555816
Կոմիտեի գլխավոր քարտուղարի պարտականությունները ժամանակավոր կատարող

________________ Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ
(ստորագրություն)
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**
<<Արփա - Սևան>> ԲԲԸ
ք. Երևան, Վ. Վաղարշյան 20
<<Կոնվերս բանկ>> ՓԲԸ
էլ. փոստ info@arpa-sevan.am
Հ/Հ 193004671700
ՀՎՀՀ 00003206
Ընկերության գլխավոր տնօրեն՝

________________ Պ. ՀԱԿՈԲՅԱՆ
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված N 1
<<17>> օգոստոսի 2004թ.
N <<N ԾՋԲ- 04/36>> ծառայությունների
մատուցման գնման պայմանագրի
<<24>> մարտի 2022թ.
կնքված Համաձայնագիր 16-ի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*
**2022թ.**

ՀՀ դրամ

| N | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել 2022թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | **Ընդամենը Տարի** |
| 1. | 66161100/1 | ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՐՓԱ-ՍԵՎԱՆ ԹՈՒՆԵԼԻ - | 25 000 000 | 51 450 000 | 68 600 000 | 85 750 000 | 100 000 000 | | | | | | **100 000 000** |
| | | | | | | | | 60% | 70% | 75% | 85% | 100% | **100%** |

*Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
Ջրային կոմիտե
ք. Երևան, Վարդանանց 13ա
ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011011708
ՀՎՀՀ 02555816
Կոմիտեի գլխավոր քարտուղարի
պարտականությունները ժամանակավոր կատարող

________________ Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ
(ստորագրություն)
Կ. Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**
«Արփա-Սևան» ԲԲԸ
ք. Երևան, Վ. Վաղարշյան 20, հեռ. 012211111(133)
էլ. փոստ info@arpa-sevan.am
<<Կոնվերսբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 193004671700
00003206
Գլխավոր տնօրեն

________________ Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
(ստորագրություն)
Կ.Տ